



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«17» 08 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 78

Ձեռնարկողը՝

<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոյուշնս>> ՍՊԸ
Ք. Երևան, Վ. Սարգսյան 26

Գործունեությունը՝

Գ. Դավիթ Բեկ, Կարմրաքար թաղամասի № 2 փողոցի
2 նրբանցք հասցեում Վոլոդյա Մարտիրոսյանին պատկանող
առանձնատան 0.2244 էլեկտրամատակարարման շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկշիռային
Սյունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 78

<17> 09 2018թ.

«Սյունիքի մարզի, գ. Դավիթ Բեկ, Կարմրաքար թաղամասի № 2 փողոցի 2 նրբանցք հասցեում Վոլոդյա Մարտիրոսյանին պատկանող առանձնատան 0.22կՎ էլեկտրամատակարարման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն»

Ձեռնարկող՝

«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/

/Բ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

Սյունիքի մարզ, Կապան համայնք

Համաձայն նախագծի նախատեսվում է Սյունիքի մարզի Դավիթ-Բեկ գյուղի Կարմրաքար թաղամասի № 2 փողոցի 2 նրբանցք հասցեում կառուցել 0.22կՎ օդային գիծ՝ Վոլոդյա Մարտիրոսյանին պատկանող առանձնատան էլեկտրամատակարարման համար: Շինության էլեկտրամատակարարումն իրականացվելու է 35/10 կՎ «Արծվանիկ» ենթակայանից սնվող 10կՎ «Դավիթ-Բեկ» ՕԳ-ի մոտակա հենարանից, կառուցելով՝ 0.4կՎ և 0.22կՎ մեկուսացված հաղորդալարերով օդային գիծ: Օդային գծի անցկացման տարածքը գտնվում է Կապան համայնքի Դավիթ-Բեկ գյուղի վարչական սահմաններում, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Գորիսի անտառտնտեսության «Արծվանիկ» անտառպետության տարածքում: Նախագծված 436մ երկարությամբ էլեկտրամատակարարման օդային գծի անցկացման համար օգտագործվելու է ինքնակիր մեկուսացված հաղորդալար (ԻՄՀ), որոնք մեկուսիչ թաղանթով են, և օժտված են բարձր անվտանգությամբ: Նման հաղորդալարերի օգտագործումը նպատակահարմար է բնակելի և անտառապատ գոտիներում օդային գծերի անցկացման համար, քանի որ ծառահատումների անհրաժեշտությունը հասցվում է նվազագույնի:

Գործունեության ենթակա տարածքն ընկած է անտառային տարածքի հողային հարթ մակերևույթի վրա, որտեղ սողանքավտանգ երևույթները բացակայում են: Տարածաշրջանում գոյություն ունեցող բնապահպանական և պատմամշակութային



տարածքները դիտարկվող տարածքից գտնվում են զգալի հեռավորության վրա և աշխատանքների իրականացման արդյունքում որևէ ազդեցության չեն ենթարկվի:

Նախատեսվող գործունեության համար դիտարկվել են այլընտրանքային տարբերակներ, ընտրված տարբերակը բնապահպանական և ֆինանսատնտեսական տեսանկյունից եղել է նպատակահարմարը:

Նախագծված օդային գծի ընդհանուր երկարությունը (0.4կմ և 0.22 կմ օդային գծի մեկուսացված հաղորդալարերը միասին) կազմում է 436մ, որից 0.4կմ օդային գծինը 395մ է, իսկ 0.22կմ օդային գծինը՝ 41մ: Օդային գծի 0.4կմ լարում ունեցող հատվածի հաղորդալարն ընտրվել է ԻՄՀ-2 3x35+1x54.6 մմ² կտրվածքի, իսկ 0.22կմ լարում ունեցողինը՝ ԻՄՀ-2 2x16 մմ² կտրվածքի: 0.4կմ ՕԳՄ-ի կտրվածքի ընտրությունը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ թաղամասը զարգացող է, հետագայում նոր կառուցվող գծից սնվելու են այլ սպառողներ: Էլեկտրամատակարարման օդային գծի հենարանների տեղադրման համար պահանջվող հողատարածքի մակերեսը կկազմի 1.14մ²:

0.4կմ ՕԳՄ-ի ուղեգիծը նախատեսված է մետաղական հենարաններով, որոնց տեղադրման խորությունը գետնի մակերևույթից 1.9մ է: Մեկուսացված հաղորդալարը դուրս գալով ենթակայանից, մոնտաժվում է №1 և №2 նոր տեղադրվող մետաղական և գոյություն ունեցող №1՝ և №2՝ 10կմ ՕԳ-ի ե/բ հենարաններով: Սպառողի 0.22կմ ՕԳՄ-ն սկիզբ է առնում №10 մետաղական հենարանից և միանում է սպառողի կողմից տեղադրվող մետաղական կանգնակին:

Էլեկտրամատակարարման գծի կառուցման աշխատանքները իրականացվելու են մեկ փուլով, աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմ է 10 օր: ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսվող շինարարական աշխատանքների տեսակների և այլ ցուցանիշների (այդ թվում՝ կիրառվող տեխնիկական միջոցներ և նյութեր, աշխատուժ, աշխատանքների իրականացման ժամանակացույց, օգտագործվող բնառեստուրսներ և այլն) վերլուծության արդյունքում գնահատվել է շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա կանխատեսվող ազդեցությունները և վերջիններիս համար առաջարկվել են բնապահպանական միջոցառումներ:

Նախագծված օդային գծի համար նախատեսված են 12 հենարաններ, որոնց տեղադրման փոսերը փորվելու են ձեռքով՝ հորատման համար նախատեսված սարքի միջոցով: Փորված գրունտի գումարային ծավալը կկազմի՝ 2.16մ³, որից գրունտի վերին՝ բերրի շերտը կկազմի մոտ 0.0285մ³: Այն ընդհամենը 6 օր տևողությամբ կպահվի ջրադիմացկուն ՊՎԲ ծածկով՝ աշխատանքների ավարտից հետո փորվածքների շրջագծի հատվածների ռեկուլտիվացիայի համար օգտագործվելու նպատակով: Գրունտի մնացորդային զանգվածը՝ 1315մ³ ծավալով, որպես լցանյութ տեղում կօգտագործվի հենարանների հիմքերի ամրացման, փորվածքների բարեկարգման համար:

Գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են՝ շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները (որոնք առաջանում են վառելիքի այրման արդյունքում) և անօրգանական փոշին, որն առաջանում է հողային աշխատանքներից: Հենարանների տեղադրման աշխատանքների ընթացքում մթնոլորտային արտանետումները շարժական, չկազմակերպված աղբյուրներից են:

Շինարարության ընթացքում վնասակար նյութերի արտանետումների քանակները շատ փոքր են (գումարային ծավալը շինարարության ընթացքում կկազմի 0.04947տ կամ մոտ 49կգ) և չեն կարող ազդել մոտակա բնակավայրերի մթնոլորտային օդի որակի վրա:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը նախաընտեսված է օգտագործել ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար: Ընդհանուր ջրօգտագործումը կկազմի՝ 2.16մ³/կառուցման ժամանակահատված, որն ապահովվելու է Կարմրաքար թաղամասի ջրամատակարարման ցանցից:

Շինարարության համար օգտագործվող նյութերը մատակարարվելու են "ՀԷՏ" ՓԲԸ-ի «Տաթև» մասնաճյուղի պահեստից՝ անմիջապես օգտագործման համար: Շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների սպասարկումն իրականացվելու է մասնագիտացված կետերում: Շինհրապարակում փոշի առաջացնող շինարարական նյութերը ծածկվելու են ՊՎՔ թաղանթով՝ փոշեառաջացումը կանխելու նպատակով: Բոլոր տեսակի հեղուկ նյութերը պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերից խուսափելու համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա օդային գծի հենարանների կառուցման ընթացքում, դա 0.02տ ընդհանուր քանակությամբ շինարարական աղբը և այլուհնե հաղորդալարերի մնացորդներն են, որոնք աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվեն "ՀԷՏ" ՓԲԸ-ի «Տաթև» մասնաճյուղի պահեստ, կամ կհանձնվեն թափոնների մշակմամբ զբաղվող լիցենզավորված ընկերություններին:

Կապան համայնքի աղբահանող կազմակերպության հետ կնքվելու է պայմանագիր՝ կենցաղային և շինարարական աղբի հավաքման և քաղաքային աղբավայրում տեղադրման համար:

Անտառային տարածքում, օդային գծի ուրվագծի հարևանությամբ առկա ծառաթփուտային բուսականության պաշտպանության և հնարավոր վնասակար ազդեցությունների նվազեցմանը և կանխմանը ուղղված նախատեսվում են հետևյալ միջոցառումները:

- Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ հենասյուների տեղադրման վայրերում շրջայցի կազմակերպում՝ բուսատեսակների բացահայտման նպատակով:

- Հատուկ գործողությունների պլանի մշակում՝ պահպանության ենթակա կենսաբազմազանության տեսակների համար:

- Տարածքի հարևանությամբ բոլոր ծառերի գույքագրում, ցանկապատում, փորման ընթացքում արմատների պաշտպանում:

- Կապալառուի աշխատակիցների կողմից որսի, փայտանյութի պահեստավորման և այլ վնասաբեր աշխատանքների արգելում:

Նախատեսվող գործունեությունը սոցիալական ազդեցության տեսանկյունից դրական է, քանի որ ապահովում է նոր զարգացող Կարմրաքար թաղամասի էլեկտրամատակարարումը (նշված օդային գծից կարող են սնուցվել նաև այլ սպառողներ): Աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր սոցիալական ազդեցությունների նվազեցման համար, որոնք կապված են Կապան-Դավիթ-Բեկ ավտոճանապարհով երթևեկության որոշակի սահմանափակման, ինչպես նաև այլ կարճաժամկետ ազդեցությունների հետ, նախատեսվել են մեղմացնող միջոցառումներ: Հայտում նախատեսվել են նաև միջոցառումներ, որոնք ուղղված են՝ աղմուկի

նվազեցմանը, աշխատանքի անվտանգությանը, երթևեկության անվտանգությանը, արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելուն և արդյունավետ հակազդելուն:

Գործունեության իրականացման ընթացքում տարաբնույթ մեղմացնող/նվազեցնող միջոցառումները ամփոփվել են բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկման ծրագրերում, որոնք պետք է իրականացվեն կապալառու կազմակերպության կողմից: Բնապահպանական միջոցառումների իրականացման համար ՇՄԱԳ-ում նախատեսվել են ծախսեր:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Սյունիքի մարզի Կապան համայնքում իրականացվել են հանրային իրազեկումներ և քննարկումներ, հանրության կողմից հնչած դիտողություններն ու առաջարկություններն ընդունվել և հաշվի են առնվել գնահատման և փորձաքննության գործընթացներում: Փորձաքննության գործընթացում ՇՄԱԳ-ի վերաբերյալ ստացված կարծիքներով հաշվետվությունը լրամշակվել է:

Ամփոփելով վերը շարադրվածը, պետք է նշել, որ գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղայնացված բնույթի՝ պայմանավորված շինարարության կարճատև ժամանակահատվածով: Նախագծի իրականացումը հնարավորություն կտա ապահովել էլեկտրամատակարարում՝ ոչ միայն Վոլոդիա Մարտիրոսյանին պատկանող շինության, այլ նաև Դավիթ-Բեկ գյուղի և դրա վարչական սահմաններում գտնվող Կարմրաքար թաղամասի այլ սպառողների: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում սահմանամերձ Դավիթ-Բեկ գյուղը՝ սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից, կունանա դրական ազդեցություն:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ստանալ աշխատանքների իրականացման համաձայնություն՝ «Հայաստան» ՊՈԱԿ-ի Գորիսի անտառտնտեսության Արծվանիկի անտառպետություն» հետ:

2. Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության՝ 30.08.2007 թվականի N 1045-Ն, 29.01.2010թ. ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն և N72-Ն և 31.07.2014թ. N781-Ն որոշումների պահանջներով:

3. Շինարարական աշխատանքներն իրականացնել բուսաբանի մասնակցությամբ՝ հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող բուսական և կենդանական տեսակների պահպանությունն, և միջոցառումների արդյունավետությունն ապահովելու նպատակով:

4. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է Կապան համայնքի ղեկավարից ստանալ համապատասխան համաձայնեցումներ՝ շինարարական հրապարակի տեղադրման, բուսաշերտի ժամանակավոր պահեստավորման, շինարարական աղբի և թափոնների հեռացման վայրերի վերաբերյալ:



5. Անհրաժեշտ է ապահովել բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկման ծրագրերում առաջարկվող միջոցառումների և մշտադիտարկումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս>> ՍՊԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի, գ. Դավիթ Բեկ, Կարմրաքար թաղամասի N 2 փողոցի 2 նրբանցք հասցեում Վոլոդյա Մարտիրոսյանին պատկանող առանձնատան 0.22ԿՎ էլեկտրամատակարարման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Գլխ. մասնագետ



Ա. Դոնոյան

Հ. Մկրտչյան